ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության և Չինաստանի Հանրապետության սպորտի պետական գլխավոր վարչության միջև սպորտային համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարությունը և Չինաստանի Հանրապետության սպորտի պետական գլխավոր վարչությունը, /այսուհետ՝ Կողմեր/ Հայաստանի ու Չինաստանի մարզիկների միջև համագործակցությունը և հետագա սպորտային փոխանակումները, զարգացնելու, երկու ժողովուրդների միջև փոխըմբռնմանը նպաստելու նպատակով, փոխադարձ հարգանքի, հավասարության և փոխշահավետ սկզբունքների հիման վրա,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

1. Երկու Կողմերը կխրախուսեն սպորտային ղեկավարների փոխանակումը՝ համատեղ քննարկելու երկկողմ փոխանակումները և համագործակցությունը սպորտի ասպարեզում և ընդհանուր խնդիրները՝ միջազգային սպորտի բնագավառում:

2. Կողմերը կխրախուսեն և կաջակցեն սպորտային կազմակերպությունների, սպորտային ընկերակցությունների, սպորտային գիտահետազոտական ինստիտուտների, ինչպես նաև ֆիզիկական կրթության համալսարանների և քոլեջների միջև փոխանակումները:

3. Կողմերը կխրախուսեն իրենց կազմակերպած սպորտային գիտահետազոտական սեմինարներին և սիմպոզյումներին միմյանց գիտնականների և ուսումնասիրողների մասնակցությունը:

4. Կողմերը կխրախուսեն իրենց սպորտային թիմերի մասնակցությունը երկու երկրներում անցկացվող միջազգային մրցումներին և սպորտային միջոցառումներին:

5. Երկկողմ սպորտային փոխանակումների ծրագիրը կորոշվի և կիրականացվի կողմերի համապատասխան սպորտային կազմակերպությունների, հաստատությունների կամ սպորտային միությունների կողմից՝ քննարկումների միջոցով:

6. Կողմերը կհամագործակցեն միջազգային սպորտի բնագավառում, և կփոխանակեն գաղափարներ ու տեսակետներ միջազգային սպորտի շարժման զարգացման վերաբերյալ:

Հոդված 2

Կողմերը կխրախուսեն տեղեկություններին, ֆիզիկական կրթությանը, սպորտային գիտությանը, սպորտային բժշկությանը վերաբերող նյութերի փոխանակմանը և բարձրակարգ մարզիկների ու պահեստայինների մարզումները:

Հոդված 3

1. Համաձայն երկկողմ փոխանակման, ուղարկող կողմը կհոգա միջազգային ճանապարհածախսը, իսկ ընդունող կողմը՝ կեցության, սննդի և տեղի տրանսպորտի, ինչպես նաև բուժական ծառայության ծախսերը վնասվածքի կամ հիվանդության դեպքում:

2. Կողմերի երկրներում կազմակերպված աշխարհի առաջնությունների, միջազգային մրցումների կամ հանդիպումների ֆինանսական պայմանները կիրականացվեն տվյալ միջոցառման կանոններին համապատասխան:

3. Մարզիչների և տեխնիկական աշխատողների փոխանակման ֆինանսական համապատասխան պայմանները կքննարկվեն և կորոշվեն Կողմերի միջև:

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն ավարտելու մասին Կողմերի կողմից միմյանց ծանուցելու պահից:

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ կմնա հինգ տարի ժամկետով և հաջորդաբար կերկարաձգվի ևս հիգ տարիներով մինչ կողմերից մեկը երեք ամիս առաջ գրավոր չի ծանուցի Համաձայնգիրը դադարեցնելու իր ցանկության մասին:

Կատարված է Պեկին քաղաքում 2002 թվականի հոկտեմբերի 17-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, չինարեն և անգլերեն:
Տարաձայնության դեպքում գերակայությունը կտրվի անգլերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2003 թվականի ապրիլի 10-ից: